ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նկատի ունենալով հայ գրերի ստեղծող և դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի մատուցած վիթխարի ծառայությունները հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման գործում, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետը որոշեցին 1962 թվականի մայիսի կրկրորդ կեսին նշել հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։

Ստեղծված է այդ նշանավոր տարելիցը անցկացնող Ռեսպուբլիկական հոբելյանական հանձնաժողով, որի նախագահն է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանը։ Հանձնաժողովի կազմի մեջ մտել են մեր ռեսպուբլիկայի պարտիական ու պետական գործիչներ, գիտության, գրականության և արվեստի ականավոր ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների և մամուլի աշխատողներ։

Քննարկելով այն միջոցառումները, որ նախատեսվում են անցկացնել համաժողովրդական այդ տոնի առթիվ, Ռեսպուբլիկական հոբելյանական հանձնաժողովը որոշեց Մեսրոպ Մաշտոցի ծնդյան 1600-ամյակին նվիրված հանդիսավոր նիստեր հրավիրել մայիսի 26-ին. Երևանում։ Հոբելյանական հանդեսին կմասնակցեն հյուրեր Մոսկվայից, Լենինգրադից, միութենական ռեսպուբլիկաներից, ինչպես նաև արտասահմանյան երկրներից։ Հոբելյանական հանդիսավոր նիստեր կհրավիրվեն նաև Լենինականում, Կիրովականում և Աշտարակում։

Հոբելյանի օրերին Հայկական ՍՍՌ շրջանային կենտրոններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, Գիտությունների ակադեմիայում, Երևանի Պետական Մատենադարանում, դպրոցներում կկազմակերպվեն դրական երեկոներ ու զեկուցումներ՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։

Հատուկ գիտական սեսիաներ տեղի կունենան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում։

Գիտությունների ակադեմիայի Գրականության, Լեզվի, Պատմության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Փիլիսոփայության և իրավունքի, Արևելագիտության սեկտորի գիտական աշխատակիցները կկարդան մի շարք զեկուցումներ և գիտական հաղորդումներ («Մեսրոպ Մաշտոցը և հայ գրականության սկզբնավորումը», «Կորյունի «Վարք Մաշտոցի» գիրքը», «Մաշտոցը հայ ժողովրդական բանահյուսության մեջ», «Հայ գրերի գյուտը եվրոպական և ռուսական հայագիտության գնահատմամբ», «Հայ գրերի տեսակների զարգացումը», «Մեսրոպ Մաշտոցը և նրա ժամանակը», «Մեսրոպ Մաշտոցը և հայ-ասորական կուլտուրական կապերը», «Մեսրոպ Մաշտոցը և V դարի գրաբարը» և այլն)։

Մատենադարանի գիտական սեսիայում կլսվեն զեկուցումներ «Գրերի գյուտը և հայ միջնադարյան բանաստեղծությունը», «Հայ հին թարգմանչական գրականությունը», «Մեսրոպ Մաշտոցի անմիջական աշակերտները», «Հայ տպագրության 450-ամյակը» և այլ թեմաներով։

Հոբելյանի առթիվ Հայաստանի Պետական Հրատարակչությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Երևանի Պետական համալսարանի հրատարակչությունները լույս կընծայեն համապատասխան գրքեր ու աշխատություններ։

Ա. Գ.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԿԵԼԴԻՇԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոյեմբերի 28—30-ը Հայաստանի գիտնականների մոտ հյուր եղավ Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Մստիսլավ Վսեվոլոդովիչ Կելդիշը։

Երկու օրվա ընթացքում նա ծանոթացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և ճյուղային 9 գիտա-հետազոտական հիմնարկների աշխատանքների հետ։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Ե. Քոչինյանի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի գիտական հետազոտությունների կոորդինացման պետական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Մ. Գոցերիձեի, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի գիտական հետազոտությունների կոորդինացման պետական կոմիտեի նախագահ Բ. Ե. Սարգիսովի հետ միասին Ակադեմիայի պրեզիդենտ Մ. Վ. Կելդիշը եղավ Բյուրականի աստղադիտարանում, Մաթեմատիկայի և մեխանիկայի, Երկրաբանության, Էներգետիկայի, Նուրբ օրգանական քիմիայի, Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի քիմիայի ինստիտուտներում, Հաշվողական կենտրոնում, Ֆիզիկայի ինստիտուտի էլեկտրոնային արագացուցիչի շինարարությունում, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում և Կիրովի անվան գործարանում։

Ընդամենը տասը տարի է անցել ականավոր գիտնականի առաջին անգամ Հայաստան այցելելուց։ Այդ կարճ ժամանակամիջոցում ռեսպուբլիկայի գիտական կյանքում, ինչպես նշեց ՍՍՌՄ ԳԱ պրեզիդենտը, տեղի են ունեցել հսկայական տեղաշարժեր։ Բավական է ասել, որ վերը թվարկած դիտա-հետազոտական հիմնարկներից միայն 3-ն են գոյություն ունեցել 1950 թ., մյուսները ստեղծվել են վերջին տարիներում։ Շատ նոր բաժիններով, լաբորատորիաներով, ուղղություններով ընդարձակվել են ռեսպուբլիկայի գիտական հիմնարկները։

Բյուրականի աստղադիտարանում ակադեմիկոս Մ. Վ. Կելդիշին, Ա. Ե. Քոչինյանին և մյուս հյուրերին բացատրություններ տվեց Աստղադիտարանի դիրեկտոր ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Այստեղ հյուրերը ծանոթացան Աստղադիտարանում տեղադրված երկու խոշոր դիտակների՝ այդ թվում Շմիդտի սիստեմի Եվրոպայում ամենամեծ մետրանոց դիտակի հետ։ Նրանց ցույց տրվեցին այդ դիտակների շնորհիվ նկարահանված երկնային հետաքրքիր օբյեկտների ֆոտոնկարները ու արտաքին գալակտիկաների նկարները։

Զրույցի ընթացքում շոշափվեց նոր, ավելի հզոր դիտակների պատրաստման և նրանց Բյուրականի աստղադիտարանում տեղադրման հարցը։

ՍՍՌՄ ԳԱ պրեզիդենտը տալով բարձր գնահատական կատարված աշխատանքներին, որոնք նոր ուղիներ են բացում ժամանակակից աստղագիտության մեջ, շեշտեց նման հզոր դիտակների անհրաժեշտությունը Բյուրականի համար և հավանություն տվեց այդ ուղղությամբ Աստղադիտարանի ձեռնարկած միջոցառումներին։

Մեծ հետաքրքրություն առաջացրեցին կիբեռնետիկայի ուղղությամբ Հաշվողական կենտրոնում և Էներգետիկայի ինստիտուտում տարվող աշխատանքները։

Էներգետիկայի ինստիտուտում Մ. Վ. Կելդիշը ծանոթացավ տեղում ստեղծված էլեկտրական սիստեմների մաթեմատիկական մոդելներին, որոնց շնորհիվ ձեռք է բերվում հաշվարկների բարձր ճշտություն, և Էներգոսիստեմների ռեժիմների հաշվարկների համար նախատեսվող էլեկտրոնային թվային մեքենայի ստեղծման սկզբունքների հետ։

Հաշվողական կենտրոնում նրա ուշադրությունը գրավեց մաթեմատիկական տեքստի հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն մերենայական թարգմանությունը։

Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում Մ. Վ. Կելդիշը մանրամասնորեն հետաքրքրվեց ինստիտուտի լաբորատորիաներում սինթեզված հայրենական նոր գանգլերոն, դիտիլին, արվենալ պրեպարատներով, նշելով նրանց մեծ նշանակությունը ժողովրդական առողջապահության մեջ և այդ ուղղությամբ տարվող աշխատանքների ընդլայնման անհրաժեշտությունը։

Ժողտնտխորհի Քիմիայի ինստիտուտում ակադեմիկոս Կելդիշի ուշադրությունը գրավեցին այն աշխատանքները, որոնք կատարվում են նեֆելինային սիենիտների կոմպլեքսային մշակման և ժողովրդական տնտեսության համար նրանցից ստացվող բազմաթիվ նյութերի ուղղությամբ։ ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Գ. Մանվելյանը հյուրերին ծանոթացնելով լաբորատորիական պայմաններում տուֆից և սիենիտներից ստացվող ապակեթելի, էլեկտրական մեկուսիչների, հայկական հախճապակու նմուշների հետ, բերեց նաև տեղական հում-

ի կոմպլեքսային օգտագործման տնտեսական արդյունավետությունն ապացուցող օրինակներ։

Ինչպես այս ինստիտուտում, այնպես էլ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում ՍՍՌՄ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Մ. Վ. Կելդիշը հետաքրքրվեց Հայաստանի բնական հարստություններով, նրանց հետախուզման և օգտագործման ուղղությամբ տարվող աշխատանքներով։ Նա հատկապես հետաքրքրվեց ոսկու և այլ հազվագյուտ ու ցրված մետաղների պաշարներով, մասնավորապես նրանց բանական ու որակական բովանդակությամբ։

Երևանում գտնվելու վերջին օրը ակադեմիկոս Մ. Վ. Կելդիշը հանդիպում ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության անդամների և մի շարք ակադեմիկոսների հետ։

Զրույցի ընթացքում շոշափվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի աշխատանքների վիճակի և հեռանկարների հարցերը։

Նոյեմբերի 30-ին Մ. Վ. Կելդիշը Հայաստանի մի խումբ գիտնականների հետ միասին մեկնեց Թբիլիսի՝ մասնակցելու Վրաստանում սովետական կարգերի հաստատման և Կոմունիստական պարտիայի ստեղծման 40-ամյակին նվիրված ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի, Հայկական, Վրացական, Ադրբեջանական ՍՍՌ գիտությունների ակադեմիաների միացյալ գիտական սեսիային։

Ճանապարհին Մ. Վ. Կելդիշը դիտեց Ակթարբեկյանի հիդրոկայանը և ծանոթացավ նրա աշխատանքների հետ։

Հ. Ա.

ՄԻԱՑՅԱԼ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՍԻԱ

1961 թ. հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 3-ը Թբիլիսիում կայացավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի գիտությունների ակադեմիաների միացյալ հոբելյանական սեսիան՝ նվիրված Վրաստանում Սովետական իշխանության հաստատման և Վրաստանի Կոմունիստական պարտիայի ստեղծման 40-ամյակին։

Բացման պլենար նիստը տեղի ունեցավ Զ. Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական թատրոնում։ Վրաստանի ԿՊ Կենտկոմի քարտուղար Դ. Գ. Ստուրուան կարդաց Վրաստանի ԿՊ Կենտկոմի և Վրացական ՍՍՌ Գերագույն Սովետի ողջույնը միացյալ սեսիայի մասնակիցներին։ Այնուհետև ելույթ ունեցավ ՍՍՌՄ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Մ. Վ. Կելդիշը։ Նա նշեց, որ պատմական կարճ ժամանակաշրջանում Վրաստանը վերածվել է ծաղկող սոցիալիստական ռեսպուբլիկայի, որն ունի կարգացած բազմաճյուղ արդյունաբերություն, խուշոր ու մեքենայացված գյուղատնտեսություն, առաջավոր գիտություն ու կուլտուրա։ Մ. Վ. Կելդիշը բարձր գնահատական տվեց Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի աշխատանքների արդյունքներին, ընդգծելով մաթեմատիկայի ու մեխանիկայի, ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի, երկրաբանության և այլ բնական գիտությունների, ինչպես նաև պատմության, հնագիտության ու լեզվաբանության բնագավառներում ձեռք բերված նվաճումները։

Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը իր ելույթում ասաց. «Վրաց ժողովրդի բազմադարյան պատմության մեջ ոսկե տառերով գրված են վառ էջեր այն հրաշալի նվաճումների մասին, որոնց հասել է Վրաստանի տաղանդավոր ժողովուրդը Սովետական իշխանության տարիների ընթացքում։ Հայ և վրաց գիտնականները,—շարունակեց Վ. Հ. Համբարձումյանը,—հետևելով հաստատված տրադիցիային, առաջիկայում ևս կգնան արդասավոր համագործակցության ուղիներով, կփոխանակեն իրենց փորձը՝ ի փառս հարազատ Սովետական Հայրենիքի»։

Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Յու. Հ. Մամեդալիևը իր ելույթում արտահայտեց ադրբեջանական ժողովրդի ուրախությունն ու պարծանքը եղբայրական վրաց ժողովրդի պատմական նվաճումների համար, և համոզմունք հայտնեց, որ Վրաստանի աշխատավորները, ոգևորված ՍՄԿՊ XXII համագումարի որոշումներով, կհասնեն է՛լ ավելի մեծ հաջողությունների ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, գիտության ու կուլտուրայի ասպարեզում, նպաստելով կոմունիզմի կառուցման մեծ գործին։

Այնուհետև «Վրաստանի գիտությունը Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում» զեկուցումով հանդես եկավ Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլին։ Հոկ-

տեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության, ասաց նա, վրաց ժողովրդի համար բացել լայն ճանապարհ դեպի գիտելիքներն ու ստեղծագործությունը։ Սովետական իշխանության հաստատման ժամանակից Վրաստանում ընկրկվեց նոր դարաշրջան՝ ազգային, տնտեսական ու կուլտուրական վերածննդի և ծաղկման դարաշրջանը։ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ամենօրյա հոգատարության շնորհիվ գիտության զարգացումը Վրաստանում ապահովված է բացառիկ լավ պայմաններով։

Ն. Ռ. Մուսխելիշվիլին մանրամասնորեն բնութագրում է վրացական սովետական գիտության առանձին ճյուղերի զարգացման ուղիները, խոսում վրացական գիտնականների ձեռք բերած հաջողությունների մասին։ Նա ընդգծում է զարգացման այսօրվա փուլի բնորոշ գծերը գիտության կապի ուժեղացումը արդյունաբերության, պրակտիկայի, կյանքի հետ, Սովետական Միության խոշոր գիտական հիմնարկների հետ կապերի ամրապնդումը, համագործակցությունը եղբայրական ռեսպուբլիկաների գիտնականների հետ և միջազգային գիտական կապերի խորացումը։

Զեկուցումից հետո ողջույնի խոսք ասացին Լիտվական ՍՍՌ ԳԱ Նախագահության գլխավոր գիտական քարտուղար Կ. Կ. Բելյուկասը, Լատվիական ՍՍՌ ԳԱ Նախագահության անդամ Է. Ա. Յակուբայտիսը, Կիրգիզական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Մ. Մամիտովը։

Դեկտեմբերի 1-ին և 2-ին սեսիայի աշխատանքներն ընթանում էին սեկցիոն նիստերում։ Աշխատում էին մաթեմատիկայի, ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, կիբեռնետիկայի, քիմիայի, երկրաբանության, աշխարհագրության ու գեոֆիզիկայի, կենսաբանության, բժշկության, տեխնիկայի, պատմության, լեզվի ու գրականության, փիլիսոփայության, տնտեսագիտության ու իրավունքի սեկցիաները։

Համապատասխան սեկցիաների նիստերում զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոսներ Ա. Ի. Բերգը, Լ. Ի. Սեդովը, Ա. Ի. Օպարինը, Ի. Ս. Բերիտաշվիլին, Ադրբեջանական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Յու. Հ. Մամեդալիևը, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ռ. Դ. Մաղաքյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամներ Ա. Թ. Բաբայանը, Վ. Տ. Թառայանը, Ս. Ա. Համբարձումյանը և ուրիշներ։ Սեկցիաների աշխատանքներին մասնակցեցին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Գ. Ներսիսյանը, Ն. Խ. Հարությունյանը, Հ. Խ. Բունիաթյանը, Ս. Ս. Մկրտչյանը և ուրիշներ։

Աշխույժ անցան հասարակական գիտությունների երեք սեկցիաների աշխատանքները։ Պատմության սեկցիայի և փիլիսոփայության, տնտեսագիտության ու իրավունքի սեկցիայի համատեղ նիստերում լսվեցին ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամներ Մ. Ս. Ստրոգովիչի և Վ. Պ. Դյաչենկոյի զեկուցումները իրավունքի և տնտեսագիտության հրատապ հարցերի վերաբերյալ, Վրացական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ս. Ջիտայայի հաղորդումը վրացական ազգագրության զարգացման մասին՝ 40 տարում, պատմ. գիտ. դոկտոր Փ. Ա. Ազիզբեկովայի զեկուցումը «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ռեսպուբլիկաների կազմավորումը» թեմայով, պատմ. գիտ. թեկնածու Ն. Վ. Խոշտարիայի զեկուցումը հնագիտական նորագույն գյուտերի մասին և մի շարք այլ հետաքրքրական զեկուցումներ։ Հայաստանի գիտնականներից պատմության սեկցիայում զեկուցումներով հանդես եկան պատմ. գիտ. դոկտոր Գ. Ռ. Ղարիբջանյանը՝ «Կովկասի բոլշևիկների գործունեության ղեկավարությունը Վ. Ի. Լենինի կողմից արտասահմանում» թեմայով և պատմ. գիտ. թեկնածու Գ. Խ. Սարգսյանը՝ «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» թեմայով։

Լեզվի և գրականության սեկցիայում լսվեցին Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Գ. Բարամիձեի («XII դարի վրացական հումանիստական գրականության մասին»), Գ. Ն. Լեոնիձեի («Վրացական սովետական գրականագիտությունը 40 տարում»), Ա. Ս. Ջիքորավայի («Լեռնային իբերա-կովկասյան լեզուների գծով առաջին գրառումների դարձի շուրջը») զեկուցումները և մի շարք այլ հաղորդումներ։

Դեկտեմբերի 3-ին սեսիայի մասնակիցները ծանոթացան Վրաստանի առաջատար գիտական հիմնարկների գործունեությանը, ինչպես նաև մի շարք արդյունաբերական ձեռնարկների և կուլտուրական հիմնարկների աշխատանքի հետ։ Երևանյան Վրացական ՍՍՌ ԳԱ Նախագահությունը ընդունելություն կազմակերպեց ի պատիվ միացյալ գիտական սեսիայի մասնակիցների։ Ընդունելությունն անցավ ջերմ մթնոլորտում։

Միացյալ հոբելյանական սեսիան մեծ հետաքրքրություն առաջացրեց Վրաստանի մայրաքաղաքի հասարակայնության մեջ։

Դ. Ս.

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ

Լրացավ միջնադարյան հայ պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Նաղաշ Հովնաթանի ծննդյան 300 տարին։ Լինելով հանճարեղ Սայաթ-Նովայի անմիջական նախորդը, Նաղաշ Հովնաթանը միջնադարյան հայ բնաբերգության լավագույն տրադիցիաները սերտորեն շաղկապեց գուսանական-ժողովրդական պոեզիայի հետ։ Իր ստեղծագործության բոլոր կողմերով բանաստեղծը կապված էր ժողովրդի հետ։ Ժողովրդական բանահյուսության կենսահորդ աղբյուրից սնված, ժողովրդի վիշտն ու ուրախությունը արտահայտող նրա ստեղծագործությունները հեղինակին կենդանության օրոք արդեն դարձրել էին ճանաչված և սիրված բանաստեղծ։

Հայաստանի աշխատավորությունը արժանավայել կերպով նշեց Նաղաշ Հովնաթանի ծննդյան 300-ամյակը. գաստախոսություններ կարդացվեցին ռեսպուբլիկայի մի շարք վայրերում, ինչպես նաև բանաստեղծի ծննդավայրում՝ Շոռոթում։ Միջոցառումներից ամենաուշագրավը Մատենադարանի և Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կազմակերպած երկօրյա գիտական նստաշրջանն էր, որը տեղի ունեցավ Մատենադարանում, 1961 թ. դեկտեմբերի 15—16-ը։

Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանն իր բացման խոսքում հակիրճ, բայց հիմնական գծերով բնութագրեց պատմական այն միջավայրը, որտեղ կազմավորվել է Նաղաշ Հովնաթանը որպես բանաստեղծ և նկարիչ։ Ուշագրավ փաստերով ցույց տալով Շոռոթի՝ պատմական Հայաստանի Գոյթան գավառի այդ փոքրիկ գյուղաքաղաքի առևտրա-տնտեսական վիճակն ու նշանակությունը XVII—XVIII դդ., նա ուրվագծեց այն պայմանները, որոնք խթան էին հանդիսանում առևտրի, արհեստագործության և այդ հիմքի վրա՝ մշակութային կյանքի աշխուժացման համար։

«Նաղաշ Հովնաթանի կյանքն ու գրական ժառանգությունը» թեմայով ընդարձակ զեկուցում կարդաց Մատենադարանի ավագ գիտաշխատող Շ. Նազարյանը։ Նա հրապարակեց տարիների ընթացքում Նաղաշ Հովնաթանի գրական ժառանգության իր կատարած ուսումնասիրության արդյունքները։

Հետաքրքրությամբ լսվեց պրոֆ. Դ. Սևակի զեկուցումը «Նաղաշ Հովնաթանի լեզուն» թեմայով։ Բանաստեղծի լեզվա-ոճական առանձնահատկությունները գնահատելուց բացի, պրոֆ. Սևակը ցույց տվեց, որ Նաղաշի բանաստեղծությունների ընդօրինակումները կատարված են լեզվական տարբեր միջավայրերում։ Դրա հետևանքով շատ տաղարաններում Նաղաշի ոտանավորները լեզվական ֆակտուրայի տեսակետից հեռացել են Նաղաշյան բուն, հարազատ կոլորիտից և այդ տեսքով էլ մուտք գործել առանձին հրատարակությունների մեջ։ Զեկուցողը հույս հայտնեց, որ հետագա հրատարակություններում այդ վրիպումները կուղղվեն։

Այնուհետև «Նաղաշ Հովնաթանի տաղաբանները» թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը, որը ցույց տվեց Նաղաշի ոտանավորները պարունակող տաղարանների փոխադարձ առնչակցությունը, ներումը և հետագա ճյուղավորումները։

Նստաշրջանի երկրորդ օրը լսվեց արվեստագիտության թեկնածու Մ. Սարգսյանի «Նաղաշ Հովնաթանը և Հովնաթանյանների նկարչական դպրոցը» զեկուցումը։ Նաղաշ Հովնաթանի նկարչական համբավը տարածվել էր իր հայրենիքի սահմաններից դուրս և Վրաստանի Վախթանգ VI թագավորը հրավիրել էր նրան իր մոտ որպես պալատական նկարիչ։ Նաղաշի սերունդը հետագայում հայ ժողովրդին տվեց նկարիչների մի հրաշալի հույլ՝ Հակոբ, Հարություն, Հովնաթան, Մկրտում, Հակոբ, Աղաթոն Հովնաթանյաններ, որոնք մոտ 200 տարի զարգացրին հայ նկարչությունը, հատկապես՝ դիմանկարչությունը։

Տեսական հետաքրքրություն էր ներկայացնում բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավգալբեգյանի «Հայ նոր գրականության նախանշանները XVI—XVII դդ. տաղերգության մեջ և Նաղաշ Հովնաթանը» զեկուցումը։

«Նաղաշ Հովնաթանը և աշուղական պոեզիան» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Սահակյանը։ Նա ցույց տվեց Նաղաշ Հովնաթանի կատարած դերը աշուղական պոեզիայի զարգացման և մասնավորապես Սայաթ-Նովայի հրապարակ գալը նախապատրաստելու գործում։ Զեկուցողը հրապարակեց XVII դ. նշանավոր գրող և հասարակական գործիչ Երեմիա Քյոմուրճյանի՝ Պոլսից գրած նամակը Նաղաշ Հովնաթանին։

Նաղաշ Հովնաթանի թիֆլիսյան շրջանի գործունեության մասին շատ կցկտուր տեղեկություններ են պահպանվել, այն էլ իր ոտանա-

վորներում՝ առանձին ակնարկների ձևով։ Բանաստեղծի կենսագրության ուսումնասիրության համար օժանդակ նշանակություն ունի նրա ապրած ժամանակաշրջանում Վրաստանի մշակութային կյանքում հայերի ունեցած մասնակցության հարցի լուսաբանումը։ Այդպիսի փորձ էր արված Գրականության ինստիտուտի ասպիրանտ Պ. Մուրադյանի զեկուցման մեջ։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովհաննը։

Վ. Գ.

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ

1961 թ. դեկտեմբերի 27-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ երեկո, նվիրված մեր ռեսպուբլիկայի ավագագույն գրականագետներից մեկի՝ Խորեն Մարգսյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 40-ամյակին։ Հորելյարին մեծարելու էին եկել գրականագետներ, գրողներ, պատմաբաններ, գիտության այլ բնագավառների ներկայացուցիչներ, ասպիրանտներ և ուսանողներ։

Երեկոն ներածական խոսքով բաց արեց Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովհաննը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ինճիկյանը Գրականության ինստիտուտի դիրեկցիայի և ողջ կոլեկտիվի կողմից ջերմորեն շնորհավորելով հորելյարին, համառոտակի բնութագրեց նրա կյանքի ուղին և գիտական-ստեղծագործական բեղմնավոր գործունեությունը։

Խ. Մարգսյանը երկար տարիներ աշխատել է Գրականության թանգարանում, նախ որպես բաժնի վարիչ, իսկ ապա՝ դիրեկտոր։ Նրա ջանքերով հավաքվել ու գիտական մշակման են ենթարկվել հայ դասական գրողների բազմաթիվ ձեռագրեր։ Հայկական ՍՍՌ ԳԱ ստեղծման օրից Խ. Մարգսյանն աշխատանքի է անցնում Գրականության ինստիտուտում, որի դիրեկտորն է եղել 1943—47 թվականներին։ Այժմ նա նույն ինստիտուտի հայ հին գրականության սեկտորի վարիչն է։ Նրա բեղմնավոր գրչին են պատկանում մի քանի տասնյակ ուսումնասիրություններ։ Հատկապես հետաքրքիր ու արժեքավոր են Մ. Նալբանդյանին, Ղ. Աղայանին, Վ. Տերյանին, Ստ. Զորյանին, Ա. Բակունցին, Մ. Արեղյանին նվիրված հետազոտությունները։

Խ. Մարգսյանը աշխատանք է կատարել տեքստաբանության բնագավառում։ Նա է նախապատրաստել և իրականացրել Պ. Պողոշյանի, Ղ. Աղայանի երկերի ու անտիպ նամակների առաջին գիտական հրատարակությունը, ինչպես նաև Մ. Նալբանդյանի ստեղծագործությունների երկհատորյակը՝ ռուսերեն։

Մեծարման երեկոյին վաստակավոր հորելյարին ջերմորեն ողջունեցին՝ Հայկական ՍՍՌ ԳԱ Նախագահության անունից՝ Ա. Կարինյանը, Հայաստանի Սովետական գրողների միության վարչության կողմից՝ Հր. Թամրազյանը, Լեզվի ինստիտուտից՝ Ե. Տեր-Մինասյանը, Արվեստի ինստիտուտից՝ Մ. Մուրադյանը։ Ողջույններ հաղորդվեցին նաև Մատենադարանի, Պատմության ինստիտուտի, Ակադեմիայի Հրատարակչության, Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի, Հեռակա մանկավարժական ինստիտուտի, Գրականության և արվեստի թանգարանի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կոլեկտիվների, Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության վարչության, Գրականության ինստիտուտի սովետահայ, հայ հին և նոր գրականության սեկտորների կողմից։ Բանաստեղծ Հ. Սահյանը կարդաց հորելյարին նվիրված իր ստեղծագործությունը։

Երեկոյին հրապարակվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը Խ. Մարգսյանին գիտության վաստակավոր գործչի կոչում շնորհելու մասին։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հորելյարը։

Ա. Գ.